

Մ-53

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՍԻՏՈՒՏ
ՄԵԼՔՈՒՅՑԱՆ ՀԱՍԼԵՏ ԼՈՐԻԿԻ

ՀԱՅ ՄԵԼՔՈՒՅՑԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ
(ՀՍՏ ԵՐԵՎԱՆՑԱՆ ՎԵՐՆԻՍԱԺՆԵՐԻ
ՄԵԼՔՈՒՅՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ)

Թ.00.06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական ասովիճանի հայցման
առենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆ - 2011

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
МЕЛКУМЯН ГАМЛЕТ ЛОРИКОВИЧ

ДИНАМИКА РАЗВИТИЯ И СОХРАНЕНИЕ АРМЯНСКОЙ
КУЛЬТУРЫ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ
(на примере культурологического исследования
европейских вернисажей)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук
по специальности 09.00.06 "Культурология"

ЕРЕВАН - 2011

Աստենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության
ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական դեկան՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Լ. Հ. Աբրահամյան

Դաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր՝ Հ. Տ. Մարության

պատմական գիտությունների թեկնածու՝ Հ. Վ. Դիլիջյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոն

Դաշտպանությունը կայանալու է 2011 թ. հունիսի 7-ին, ժ. 14:00-ին
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի
007 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Մերժմագիրն առաքված է 2011 թ. մայիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու՝ Հ. Մ. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете факультета истории ЕГУ

Научный руководитель: член-корреспондент НАН РА Л. А. Абрамян

Официальные оппоненты: доктор исторических наук А. Т. Марутян
кандидат исторических наук Р. В. Пикичян

Ведущая организация: кафедра археологии и этнографии факультета истории
Ереванского государственного университета

Защита состоится 7 июня 2011 г. в 14:00 часов, на заседании
специализированного совета 007 в Институте археологии и этнографии

НАН РА (адрес: Ереван 0025, ул. Чаренца 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и
этнографии НАН РА.

Автограферат разослан 7 мая 2011 г.

Ученый секретарь специализированного совета
кандидат исторических наук

Ս. Ա. Մելքոնյան

Աստենախոսության ընդհանուր քննութագիրը

Հետազոտության արդիականությունը

Մշակույթը, մշակույթի խորհրդանշանային տեքստերի և նշանների, ավանդականի և արդիականի համարումները, վերարտադրությունը կամ նորերի ստեղծումը հիմնարար գործոն են ազգային և մշակութային ինքնության ձևավորման համակարգում։ Զնայած տեղեկատվական կամ հետուեղեկատվական ժամանակաշրջանում ստեղծվում է գլոբալացվող-համրդանարանացվող մշակութային միջավայր, այնուհանդեռձակ, զուգահեռաբար ակտիվանում են ազգային մշակույթի վերարտադրման, մշակութային պատկանելիության ներկայացման միտումները հատկացնեն ավանդական հասարակություններում։ Արտաքին միջավայրին ճանաչելի և հասկանալի լինելու ձգումը տեղի է ունենում մշակույթի ժամանակակից և ավանդական խորհրդանշաների գործածման միջոցով։ Նըշված միտումները ժամանակակից հայկական կություն ներկայացնելու և մշակութարանական առումով վերլուծելու համար ուսումնասիրության են առնվել 1980-ականների երկրորդ կեսից Երևանում ձևավորված և մինչև այժմ գործող ու զարգացող վերնաշմներում առկա օրինակները։ Վերջիններս հավաքնում են ներկայացնելու հայկական ավանդական և ժամանակակից ազգային ինքնության հավաքական խորհրդանշանները և պատկերագրությունը։ Միևնույն ժամանակ թեմայի ընտրությունը պայմանավորված է ուսումնասիրվող կոլությունում պարագաների հաշվի առնելով, որ գործ ունենք քաղաքային միջավայրում «ապրող» ձևուն և փոփոխվող մշակութային իրողության հետ։ Վերնիսամները նաև հայ հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական, քաղաքական, տնտեսական փոփոխություններն արագ գրանցող և արտացոլող մշակութային համակարգեր են։ Վերնիսամներն արդեն քավական հիմնավոր տեղ ունեն ժամանակակից քաղաքային մշակութային քնատեաբում, սակայն մինչ այժմ դրանք մանրամասն մշակութարանական հետազոտության առարկա չեն դարձել, և քանի որ վերնիսամներն արագ փոփոխվում են, ապա կարևոր է գրանցել քաղաքային առօրյան արձանագրող, սակայն արագ անհետացող այդ երևույթը։ Այսինքն՝ աշխատանքը արդիական է հենց նրանով, որ դաշտային նյութի հիմնան վրա կատարում է ազգային խորհրդանշանների վերածնավորման, ստեղծման, ներկայացման մեխանիզմների գրանցումն ու վերլուծությունը, ինչպես նաև դրանք ներկայացնող մշակութային միջավայրերի՝ վերնիսամների մշակութարանական քնարկումը՝ նշված խնդիրները գիտական շրջանառության մեջ դնելով։

Հետազոտության նպատակները

Աստեղնախոսության նպատակն է ուսումնասիրել հայ մշակույթի ներկայացման, տարածման, մեկնության ձևերը արդի փուլում, մասնավորապես նկարագրել հուշանվերային, կամ գրուաշրջիկային, արվեստում որպես հայոց ավանդական և ժամանակակից մշակութային ինքնություն ներկայացվող խորհրդանշանները, քննարկել դրանց առաջացման, կիրառման, փոխակերպման մեխանիզմները և միտումները: Աշխատանքի միջոցով փորձ է արվում դիտարկել Երևանում գործող երկու վերնիսամները՝ որպես տարածա-ժամանակային, մշակութային համակարգեր: Աշխատանքի խնդիրներից է ուսումնասիրել վերնիսամների ընկալումը բաղադրային քննչության, ինչպես նաև գրուաշրջիկների շրջանում և ըստ այդմ դրանք Ենթարկել մշակութարանական դասակարգման: Հետազոտության խնդիրներն են նաև վերնիսամներում ներկայացված խորհրդանշանների տիպարանումն ու դասդասումը, դրանց գարգացման և ձևափոխման մշակութային օրինաչափությունների բացահայտումը, հասարակական գործառույթներն ու դերը մայրաբաղադրի, և ընդհանրապես Հայաստանի կյանքում, նաև արտասահմանաբնակ հայերի և գրուաշրջիկների համար:

Հետազոտության գիտական նորույթը

Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում մշակութարանական տեսանկյունից քննարկել և ընդհանրացնել հայ ժամանակակից և ավանդական մշակույթի ներկայացման, պահպանման և տարածման մեխանիզմների արդի դրսերումները: Առաջին անգամ, օգտվելով մշակույթի հետազոտման և վիզուալ մարդաբանության մեթոդարանական հնարավություններից, սույն աշխատանքում հավաքվել են «հայկական նորույթ», կամ հայ մշակութային ինքնուրյուն, ներկայացվող խորհրդանշանների և դրանց պատկերագրությունների մեծարանակ վիզուալ նյութ:

Առաջին անգամ մշակութարանական քննախոտության ստորև է դասում հայաստանյան քաղաքային մշակույթում ցուցադրություն-վաճառք երևույթը, դրա սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և նշանագիտական առանձնահատկությունները: Նկարագրվում են ցուցադրությունից տոնավաճառ տանող օրինաչափությունները, քննարկվում են քաղաքի տարածքում ինքնարուխ շուկայի ձևագործման հատկանիշները:

Առաջին փորձն է մանրամասն անդրադարձ կատարելու ժամանակակից գրուաշրջիկային արվեստի (հուշանվերների) ձևավորման, տարածման, ինչպես նաև մշակութային նոր «բրենդների» ստեղծման մեխանիզմներին:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Աշխատանքը կարող է հետաքրքիր լինել ժամանակակից հայ մշակութային և ազգային ինքնության խնդիրներով գրաղվող հետազոտողներին, քանի որ ի մի է բերում և ներկայացնում մինչ այժմ չգրանցված, նոր նյութեր:

Աշխատանքի հիման վրա կարելի է ստեղծել մշակույթի հետազոտման դասընթաց, որտեղ կներկայացվի հայ ինքնության ժամանակակից դրսուրման և գրքալացման կոնկրետ մեխանիզմներ:

Աշխատանքի առանձին հատվածներ կարող են հետաքրքիր լինել հատկապես հետխորհրդային շրջանի քաղաքային մշակույթի ուսումնասիրությամբ գրաղվող մշակութարանների, ազգարանների և սոցիոլոգների համար:

Հետազոտության մեթոդարանությունը

Աստեղնախոտության հիմնական նյութը հավաքվել է 2006-2011 թթ. երկարաժամկետ ներգրավված դաշտային-հետազոտական աշխատանքի ընթացքում: Հետազոտական աշխատանքի իրականացման համար ընտրվել են այնպիսի մեթոդներ, որոնք կապահովեին հնարավորինս արդյունավետ, համապարփակ և օբյեկտիվ նյութի գրանցում: Ըստ այդմ՝ կիրառված մեթոդներն են՝ որակական հարցումներ՝ սեղմ, խորացված, կիսաֆորմալացված (ուղղորդված հարցաշար՝ բաց պատասխաններով), կենսազրական (որպես բանավոր պատմություն), փորձագիտական հարցագրույցներ, ներգրավված դիտարկում: Աշխատանքում կիրառվել է նաև խորհրդանշանների նշանագիտական և տարածքի պյորուսիմկ վերլուծություն, հուշանվերների՝ ինչպես որոշակի ընտրույթով կատարված, այնպիսի էլ քանակական վերլուծություն, որոնք չեն հավակնում բացարձակ ճշգրիտ լինել, սակայն արտացոլում են կայտն միջինացված տվյալներ: Աշխատանքի առանձնահատկությունը նաև ժամանակակից վիզուալ մարդաբանության մեթոդների կիրառումն է, որի արդյունքում վերլուծվել են լուսանկարներ, վիդեո և առողի ձայնագրություններ:

Աշխատանքի փորձարներությունն ու պաշտոնական հավանությունը

Աշխատանքի առանձին մասեր ներկայացվել են Հայաստանում և արտերկորում հրատարակված հորվածներում: Աշխատանքում քննարկված նյութը և առաջարդիված հարցերը ներկայացվել են հայաստանյան և արտասահմանյան միջազգային գիտաժողովներում, սեմինար-քննարկումներում:

Աստեղնախոտությունն ամբողջությամբ քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի մշակութարանության ամ-

թիոնի նկատում: Քննարկման մասնակիցների արված նկատառումները հաշվի են առնվել ատենախոսության վերջնական տարբերակում:

Աշխատանքի կարուցվածք

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից (առաջինը բաղկացած է չորս, երկրորդը՝ երկու բաժիններից՝ յուրաքանչյուր իր ենթաբաժիններով), վերջաբանից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և երկու հավելվածից՝ գծանկարների և լուսանկարների:

Աշխատանքի բովանդակությունը

Ներածություն

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության հիմնական նպատակն ու դրանով պայմանափորված տեսական, մերողաբանական խնդիրները, աշխատանքում առկա գիտական եզրերի սահմանումները, ուսումնասիրության առարկայի հիմնափորումները, թեմայի կարևորությունն ու արդիականությունը, գիտական նորույթը, աղբյուրների և գրականության հակիրճ նկարագրությունը:

20-րդ դ. վերջից մշակութային հետազոտությունների բնագավառում մշակութային ինքնության դրսուրման ավանդական միջոցները (պատմական տեքստեր, վերարտադրվող ավանդույթներ և բանահյուսական նյութեր) ուսումնասիրելուց բացի սկսեց քննարկել ավելի առօրեական նյութերում մշակութային ինքնության կառուցվածքի դրսուրումների հետազոտման խնդիրը, քանի որ, ըստ տեսաբանների՝ զգացվում էր կենդանի շերտի, առարկայական նյութի պակասը: Հետազոտման նշված մոտեցումը իր նկարագրությամբ համահունչ է առօրյայի. կամ այսպէս կոչված մշակույթի «ժողովրդականացված» շերտերի ուսումնասիրությանը: Մշակույթի «ժողովրդականացված» շերտ հասկացությունը գործածում է ներ որպէս ժողովրդական մշակույթի դրսուրումներից մեջի անվանում, քանի որ մեր հետազոտության նյութը իրականում ձևավորվում է որպէս ժողովրդական, սակայն արդյունքում փոխակերպվում է կամ միտում ունի փոխակերպվելու զանգվածային մշակույթի: «Ժողովրդականացված» մշակույթի շերտը հետաքրքիր է մշակութային ինքնության և ազգայնականության հետազոտման առումով, քանի որ բավական հագեցած արտահայտում է մշակութային այն փոփոխությունները, որոնք արտացոլում են ինքնության կառուցվածքում կատարվող տեղաշարժերը: Մշակույթի ուսումնասիրության առօրեական այս շերտն ունի մի առանձնահատկություն ևս. այն հասարակագիտական բնագավառում հաճախ ընկալվում է որպէս մակերեսային, փոփոխական երևոյթ, ինչի պատ-

ճառուվ այնտեղ արտացոլված խորքային ինֆորմացիան (օրինակ, այս դեպքում մեզ հետաքրքրող մշակութային ինքնության պատկերագրությունը), մեռում է «անտեսանելի»: Մինչդեռ իրականում այս շերտը զարմանալիորեն դառնում է մշակութային ժառանգությունը պարուրող թաղանթ, որը կարողանում է ընդունել մշակույթի ներսում կատարվող փոխակերպման ազդանշանները և արտացոլել սոցիալական միջավայրում:

Մշակույթի ներկայացման և վերարտադրման ժամանակակից սոցիալական միջավայրերից քննարկվում են Երևանի երկու վերնիսամների օրինակները, որոնք քաղաքի մշակութային բնատեսքում (լանդշաֆտում) ունեն իրենց ձանաշելի նիշան: 20-րդ դ. և 21-րդ դ. ազգային մշակույթի ուսումնասիրություններում ուղղակի անդրադարձ է կատարվում ենց քաղաքային գործոնին: Համարվում է, որ հետարդյունաբերական շրջանի դառնում են ակտիվ միջավայր՝ մշակութային ինքնությունը կամ ազգային մշակույթը վերարտադրելու և ներկայացնելու համար: Այս առումով է, որ քաղաքը որպէս այդպիսին դառնում է հետաքրքիր և խոսուն ոչ միայն սոցիոլոգ-ուրբանիստների կամ ազգագրագետների, այլ նաև մշակութաբանների համար: Վերնիսամները փաստորեն ներառվում են մշակույթի հետազոտման պոստմոդեռնիստական քննախոսության այն դաշտ, որտեղ քաղաքային տարածքում հայտնաբած սոցիո-մշակութային միջավայրերը դիտարկվում են որպէս տվյալ մշակութային նշանների ընկալումների, տարածման կամ գործածման, վերաիմաստավորման եղանակների արտացոլում: Այս առումով երևանյան վերնիսամների ուսումնասիրությունը խկապես կարևոր է այն պատճառով, որ վերջիններս դառնում են հետարդյունաբերական, տեղեկատվական գլոբալացման շրջանում սոցիալական, ազգային, մշակութային միտումները հավաքող համակարգեր, որտեղ դրսուրփում են նաև մշակութային ինքնության վերափոխումները: Հաշվի առնելով այս փաստը, վերնիսամնայան «գերակատարների» կենսագրական ինֆորմացիայի հիման վրա հատուկ անդրադարձ է արվում վերնիսամների կազմավորման նարբատիվին: Նենց այդ դերակատարներն են ստեղծում վերնիսամների մշակութային միջավայրը և «հայկականություն» ներկայացնող ստեղծագործական արտեֆակտերը:

Գլուխ 1. Վերնիսամի ձևավորումը

1.1. «Սարյանի վերնիսամիք» կազմավորումը և զարգացումները

Ուրբանիստիկայի բնագավառի և քաղաքի սոցիոլոգիայով զբաղված մասնագետները քաղաքի հատակագիծը և ճարտարապետությունը, ինչպէս նաև դրանցով պայմանավորված սոցիալական տարածքները համա-

րում են տեքստեր: Դա համահունչ է նշանագիտության և մշակութաբանության մեջ օգտագործվող «տեքստ» լայնիմաստ եզրին: Առաջին գլխի առաջին բաժնի ներածական ենթաբաժնում ուսումնասիրվում է Երևան քաղաքի Օպերային հարող տարածքի սևմոտիկ (նշանագիտական) տեքստը, քանի որ նոյն օրինաշափությամբ այս նոյն միջավայրում հետազայում ձևավորվում են «հայկականանության» ներկայացման նախադրյալները, այսինքն բացահայտվում է մշակութային ինքնուրյան արտահայտման և քաղաքային միջավայրի միջև գործող փոխկապակցվածությունը:

Ատենախոսության առաջին բաժնում ներկայացվում են Երևանում առաջին վերնիսաժի՝ որպես մշակութային միջավայրի ստեղծման նախադրյալները: Քննարկվում են քաղաքային մշակույթում 1986-1993 թթ. ընկած շրջանում վերնիսաժի կազմակորման և կարգավորման գործընթացները: Վերնիսաժն ինքնարույն առաջանում է 1986 թ. Օպերային հարող պուրակում, որտեղ նոյն թվին տեղադրվում է Մարտիրոս Սարյանի հուշարձանը (այսուհետ ցուցադրություն-վաճառք ներկայացնող վերնիսաժի հասարակության մեջ ստանում է նաև «Սարյանի վերնիսաժ» անվանումը):

Վերնիսաժ երևույթը առաջանում է որպես նկարչական միջավայր, որը համընկնում է դասական ֆրանսիական վերնիսաժային մշակույթին և դառնում է Երևանում առաջին ինքնարույն ցուցադրություն-վաճառքի միջավայր: Վերնիսաժան նկարիչները միաժամանակ հանդիս են գոյական որպես նորարար ստեղծագործողներ, և քանի որ արդեն տեղադրվել եր Սարյանի հուշարձանը, ով նոյնական համարվում էր նորարար ստեղծագործող, նկարիչները նրան իրենց գաղափարախոսական առաջնորդ ին համարում, ինչն արտահայտվում է նաև տարածական կողի միջոցով՝ հուշարձանի շուրջը նկարիչների շրջանաձև խմբավորմամբ:

Առանձնակի ուշադրություն է դարձվում վերնիսաժի կազմակորմանը, որը վերականգնվում է բանակոր պատմությունների նարրատիվի մերժողի միջոցով: Վերնիսաժային միջավայրի մշակութաբանական վերլուծությունը կարևոր է նաև այն պատճառով, որ վերջինս ըստ եռյան դառնում է հայկական ինքնուրյան իորհրդանշաններ ներկայացնող կիրառական արվեստի սաղմնավորման մշակութային միջավայր:

Այս բաժնում քննարկվող կարենոր խնդիրներից է «Սարյանի վերնիսաժ» տարածքի մշակութային յուրացման օրինաշափությունների հարցը, մասնավորապես, թե ինչո՞ւ է վերնիսաժը կազմակորվում քաղաքի հենց տվյալ մշակութային և սոցիալական միջավայրում: Քննարկվում է

նաև «Սարյանի վերնիսաժի» սերքին տարածքի մշակութայնացումն ու յուրացումը կամ ստեղծագործական ֆոնը, որով դուրս են բերվում հասարակության մեջ վերնիսաժի կողմից իրականցված մշակութային գործառույթները: «Սարյանի վերնիսաժ» կազմակորման և սոցիալական նշանակության ուսումնասիրության ձևապահությունների միջոցով, վերակառուցվում է քաղաքային մշակույթի այս «անհայտ» կամ չգրանցված պատմությունը: Այս հարցը ոչ միայն ուրբանիստական նշանակություն ունի, այլև անմիջականորեն առնչվում է մշակութային մարդաբանության մեջ հայտնի մոտեցումներին, որոնք քննարկում են սոցիալական հիշողությունը, դրանով պայմանագրված մշակութային միֆերի առաջացումը (օրինակ, թե ինչպես է ստեղծվել նախնական վերնիսաժը, և ինչ վիզուալ դետալներ են ամրագրվել հանրային հիշողության մեջ): Այստեղ առաջ են գալիս նաև տարբեր սոցիալական, մասնագիտական խմբերի կողմից քաղաքային/հանրային տարածքի յուրացման, վերահմաստավորման, տարածքի ներքին և արտաքին մենքալ-երևակայական սահմանների ձևավորման խնդիրները, սահմանից այնկողմնայինի ընկալումը՝ «օտար» – «յուրային» հարաբերությունը: «Սարյանի վերնիսաժին» վերաբերվող հատվածում քննարկվում է նաև հետխորհրդային շրջանում վերջինիս վերափոխումը նախաշուկայական միջավայրի, որտեղ արդեն նկարներից և հետազայում ավելացած կիրառական արվեստի ստեղծագործություններից բացի՝ սկսում են վաճառվել դասական քրջի շուկային և մանրածախ առևտրին հասուկ ապրանքներ, ինչը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակով: Այսպիսով, Սարյանի արձանի մոտ գործող վերնիսաժը, առաջանալով որպես նորարար և ազատական նկարիչների համար ստեղծագործելու միջավայր, սկսեց տարերայնորեն վերաձել տարբեր ապրանքների վաճառքի տարածքի, որի պատճառով էլ գործկոմի որոշմամբ 1993 թ. հուլիսին այն մասնակի տեղափոխվեց, իսկ «Սարյանի վերնիսաժ» վերահմաստավորվեց որպես «միայն գեղանկարչական լավագույն գործերի ցուցահանդես-վաճառք», այսինքն՝ տեղի ունեցած «վերադարձ» վերնիսաժի սկզբնական՝ ֆրանսիական տիպի վիճակին: Իրականում այդ տարիների «Սարյանի վերնիսաժը» ոչ միայն լրկալ ստեղծագործական միջավայր էր, այլ ուներ հստակ արտահայտված մշակութային, սոցիալ-տնտեսական նշանակություն այն դառնում է նաև խորհրդային շրջանի, ապա հետխորհրդային Հայաստանի ժամանակակից մշակութային և սոցիալական իրավիճակը և փոխակերպումները արտացոլող միջավայր:

1.2. Նոր վերնիսաժը

1993 թ. գործկումի որոշմամբ Խանջյան և Հանրապետության փողոցների միջև ընկած բոլվարում բացվեց կիրառական արվեստի ստեղծագործությունների, հուշամելյալների, գրքերի, նկարների վաճառքի տարածքը՝ նոր վերնիսաժը։ Չնայած «վերնիսաժ» անվանումն այնքան էլ բնորոշ չէ հետազոտության նշված օբյեկտին (վերջինս «Ժառանգել» է այդ անվանումը նախկին՝ «Սարյանի վերնիսաժից» տեղափոխված լինելու պատճառով), բանի որ վերնիսաժը ենթադրում է նկարչական միջավայր, մինչդեռ նոր բացված վերնիսաժում է ավելի լայն ապրանքային տեսականի՝ սկսած հուշանվերներից մինչև կենցաղային, տևական գործարանային իրեր։ Ուշագրավ է, որ նոյն՝ «վերնիսաժ» տիպի շուկաների ստեղծումը ընդհանրապես բնորոշ է հետխորհրդային տարածքի համար (օրինակ՝ Ռուսաստանում և Վրաստանում), դրանք ևս կազմակեցվում են հանրային գրոսավայրերում կամ այգիներում։

Առաջին գլխի երկրորդ բաժնում ներկայացվում և վերլուծվում են նոր վերնիսաժի հատկապես ներքին տարածքի յուրացման մշակութաբանական օրինաչափությունները, բաժնումները։ Ցույց է տրվում, թե ինչպես են կիրառական արվեստի ստեղծագործող վարպետները դառնում վերնիսաժի մշակութային կենտրոնը և «պրեստիժային» դերակատարները, որոնց ստեղծագործությունների հիման վրա հաջորդ գիլտում քննարկվում են հայկական մշակույթի կամ «հայկականության» ներկայացման և պահպանման, վերափոխման և տարածման գործընթացները։

1.3. Վարպետ և վաճառող

Այս բաժնի մշակութաբանական քննարկման առարկան է վերնիսաժի գարգացման ժամանակագրական և վերնիսաժից շուկա վերափոխման դինամիկան։ Նոր վերնիսաժի ձևավորման ընթացքը կարելի է բաժնել և ներկայացնել մի քանի փուլերով, ընդ որում վերնիսաժն ինքը հուշում է, թե գարգացման որ փուլում հատկապես որ կերպարը կարող է գերիշխող դիրք ունենալ, ինչպես տեղի ունեցավ, օրինակ, կազմավորման երկրորդ փուլի սկզբում, եթե հուշանվերներ պատրաստող վարպետները դարձան սեմիտիկ կենտրոն և հենց վարպետի կերպարը սկսվեց ընկալվել որպես Վերնիսաժի «բրենդ»։ Դայմանականորեն առաջին փուլը սկսվում է 1993-1994 թթ. տարածքի յուրացման և կազմակերպման բավական բառային բնույթ ունեցող նախնական շրջանից։ Երկրորդ փուլում՝ 1996-2000 թթ., Վերնիսաժը մոտեցավ շուկայի կարգավիճակին, և ներսում տեղի ունեցավ վարպետ և վաճառող սոցիալական և մասնագիտական դերերի հստակ

տարարաշխում, ինչն արտահայտվեց նաև տարածքի ներքին բաժնաման մեջ վարպետ-արհեստավորները դառնում են հիմնական «դերակատարներ», վերնիսաժ-շուկային տրվում է մասնագիտական ուղղվածություն (ձեռքի աշխատանք, կիրառական արվեստ-հուշանվերներ): 2000-2006 թթ. տեղի է ունենում շուկայական կառուցվածքի գերակայության մեծացում, և վերավաճառողներն ու ոչ-վարպետներն սկսում են ավելանալ, իսկ վերնիսաժի մշակույթը ձևավորած վարպետների (այդ թվում իսկական ժողվարպետների) թիվը նվազում է։ Այս փուլերում վերնիսաժյան «դերակատարների» և նրանց հարաբերակցության նշանակությունն ուղղակիորեն ազդեցություն է ունենում հայ ինքնության խորհրդանշանների վերնիսաժան ձևավորման գործնաթացի վրա, ինչ քննարկումը ներկայացված է ատենախոսության երկրորդ գիտում, իսկ այստեղ ավելի ընդհանրական ձևով անդրադարձ է արվում վերնիսաժի՝ մշակութային տարածք թե շուկա լինելու հարցին։ Վերնիսաժի փուլային զարգացման ժամանակ առաջանում է նաև վարպետ-վերականառող կերպարների «հակամարտությունը», որը քննարկման դաշտ է բերում նաև նշված շուկա-մշակույթ/արվեստ համակարգերի միջև մենթալ սահմանի ձևավորման մշակութաբանական խնդիրը։

1.4. «Զնկատվող» սոցիալական և քաղաքային մշակույթ. «բարախողկան» վերնիսաժի տարածքում

Այս բաժնում քննարկվում է վերնիսաժին կից «բարախողկա» շուկայի մշակութային, տարածական առանձնահատկությունները, ուսումնասիրության են ներարկվում հատվածի մշակութաբանական հատկանիշները, վերլուծվում է վերջինիս առանձնացման պատճառը և տարբերությունը բուն վերնիսաժի մշակութային միջավայրից և սրա գործառութային նշանակությունը քաղաքային, սոցիալական-մշակութային միջավայրում։

Վերնիսաժյան «բարախողկայի» սաղմերը ևս առաջացել են Հայաստանի անկախացումից հետո՝ 1992-1994 թթ., դեռևս «Սարյանի վերնիսաժում» այն դառնում է նաև նոր վերնիսաժի առանձնահատկություններից մեկը։ Երեանում քննակցության շրջանում վերնիսաժյան «բարախողկան» անվանվում է ըստ վաճառվող ապրանքի տեսականու։ «Երկարժենի վաճառքի տեղ» կամ «Էժան ապրանքների տեղ», «բարախողկա», երեսն օգտագործվում է նաև «տալկուչկա» (ռուսերեն տոլկուկա բարից) անվանումը, որը շեշտում է վայրի մարդաշատ բնույթը։ Վերնիսաժի հուշանվերային և «բարախողկա» շուկայական հատվածները տարբերվում են վաճառվող տեսականիով, հետևաբար՝ նաև գնորդներով։ Վերնիսաժյան տարածքի «բարախողկայի» հատվածը գործառութային առումով շրջա-

դարձորեն տարբերվում է քուն վերնիսաժի ընդհանուր գործառությախին սկզբունքից: 2002-ից հետո վերնիսաժի հուշանվերային հատվածի որակական զարգացումը և «քարախոլկայի» հատվածի նախնական վիճակում մասը ավելի է շեշտում, որ վերնիսաժին կից «քարախոլկա» շուկայական հատվածը առանձին, ինքնուրույն կարգավորվող առևտրական գոտի է, որն անվանապես և գործառույթներով անկախ է վերնիսաժից: Սակայն վերնիսաժի «քարախոլկայի» հատվածը շարունակում է դեռևս գործել անմիջապես Հանրապետության հրապարակին և կառավարության շենքին կից տարածքում, ինչը անհամատեղի է քաղաքային մշակութային բնաւերքին: Ուշագրավ է, որ հենց մեր աշխատանքի ավարտին գործընթաց, Երևանի քաղաքապետի միջամտությամբ (2011 թ. ապրիլի ամսվա դրույթամբ) արդեն սկսվել է քաղաքի «վերնիսաժան» հատվածի քարեկարգման ծրագիրը, և «քարախոլկայի» այս հատվածը՝ որպես առանձին միավոր, նախատեսվում է տեղափոխել քաղաքի այլ մաս: Այսինքն՝ մեր աշխատանքը դառնում է քաղաքի քրջի շուկայի և քաղաքային տարածքի կենսագրականը:

Գլուխ 2. Ազգային ինքնուրյան ներկայացումը վերնիսաժում

2.1. Հայկականության հայլաքական պատկերը

Այս գլխում քննարկվում է, թե ինչ խորհրդանշաններ են դառնում առաջնային վարպետների համար, և ինչպես են դրանք արտացոլում հայ ինքնուրյունը կամ աղերսվում դրա հետ:

Վերնիսաժում վաճառվող հուշանվերներից շատերն ունեն, ազգային ինքնուրյան ներկայացման առումով երկակի բնույթ. մի դեպքում քուն հուշանվերն է իր կատարման ձևով ներկայանում որպես հայկական ժողովրդական ստեղծագործություն, մեկ այլ դեպքում հուշանվերը ներկայացվում է որպես ազգային՝ վրան արված հայկական մշակույթը ներկայացնող որևէ խորհրդանշանի պատկերումով: Ըստ թեմատիկ բնույթի հուշանվերները կամ դրանցում գործածվող ինքնուրյան խորհրդանշանների պատկերագրությունը կարելի է տարբերակել մոտ մեկ տասնյակի. 1) Արարատ լեռ, 2) Նոյյան տապան, 3) մաշտոցյան զիբը, 4) Եկեղեցիներ, հուշարձաններ, 5) տիկինիկներ, 6) աղամաններ, 7) պատմական կերպարներ, հերոսներ, անհատներ, 8) հայկական քարը. նույն (որպես մշակութային ինքնուրյան նոր խորհրդանշան), խաղող, ընդեղեն, 9) ժայռապատկերներ, 10) Հայաստանի պետական խորհրդանշաններ, 11) Հայաստանի բնաւերք, քարտեզը, 12) Երևան քաղաքը:

Վերնիսաժան հուշանվերներում կիրավող խորհրդանշանները գործածվում են առանձին-առանձին՝ որպես ինքնուրույն միավորներ, կամ

միաժամանակ համատեղված՝ հնարավոր դարձնելով տեսնելով ներկայացվող կամ ներկայացուցական համարվող «հայկական ինքնուրյան» խմբավորված, խուացված պատկերը: Որպես նման խուացված խորհրդանշաններ կրող առանձին հուշանվերային խումբ են կազմում նարդիները, որոնց տախտակի վրա համատեղվում, հավաքվում են տարածված խորհրդանշանային թեմատիկ խմբերը: Հանդիպում են նաև օրինակներ, երբ վերնիսաժում արտահայտված-ներկայացված հայկականությունը չի համընկնում զիտական, պետական և մշակութային քաղաքականության համար կիրառելի և ընդունելի համարվող խորհրդանշանների հետ: Սակայն, որպես կանոն, հայկականություն, Հայաստան ներկայացնող որոշ խորհրդանշաններ հաճախակի կիրառվում են և վերնիսաժում, և միևնույն ժամանակ հասարակական, պետական համակարգերում: Այսինքն՝ դրանք ունեն համընդիանուր սոցիալական նշանակություն: Ուշագրավ է, որ ինքնուրյունը կամ ինքնուրյան պատկերագրության ակտիվացումը կիրառական արվեստում սկսեց այն շրջանում, երբ առաջացավ «հայկականության» պահանջարկով առաջացած «մշակութային ինքնուրյան բրենդները», ի տարբերություն դրանց բնօրինակի, դրանում են կիտչային արվեստի լավագույն դրսերումներ, իսկ դրանց ստեղծման նկարագրությունը վերհանում է ավանդական արտեֆակտից նոր ծիսական գործառույթով օժտված հուշանվերի դեկոնտրուկտիվ փոխակերպումը («Նորին» ափկնիկի հուշանվերայնացման օրինակը):

Հայաստան ներկայացնող խորհրդանշաններից առաջինը, որ պայմանականորեն համարում ենք խորհրդանշանային ունիվերսալիա (այն հաճախակի կիրառվում է թե վերնիսաժում, թե՝ միևնույն ժամանակ՝ հասարակական, պետական համակարգերում), Արարատ (Մասիս) լեռն է: Արարատ լեռը վերնիսաժում ամենատարածված պատկերներից է, ներկայացվում է որպես հայ ազգային ինքնուրյան խորհրդանշան, վերաբերում է հայկական մշակույթի տարբեր սապարեզներին և հայկականության ընդհանրապես: Վերնիսաժան սկզբնական շրջանում Արարատի թեմատիկան ավելի տարածված է եղել հատկապես նկարներում, իսկ 2001-ից քուն հուշանվերների հատվածում ևս նկատվում է Արարատի թեմայի լայն կիրառումը նախ և առաջ նարդիների արտաքին տեսքի ձևափորման մեջ, ապա այլ հուշանվերային ձևերում: Հայկական մշակույթում Արարատ լեռն ինքնանշանացումը սկսվել է վաղագույն շրջաններից և արտահայտվել է տարբեր առասպելաբանական, բանահյուսական,

պատմական և ծիսական տեքստերում, ինչպես նաև գեղարվեստական և բարձրագիտական գրականության մեջ: Վերնիսաժան վարպետների կարծիքով ևս Արարատ լեռը այն «ամենահայկական» է, ինչից կարելի է սկսել վերնիսաժան զործունությունը: Վարպետների հետ խորացված հարցումներից ստացվող նյութերից և նրանց աշխատանքների դիտարկումից ստացվում է Արարատ լեռան կիրառման հիմնական չորս մոտիվացիա՝ 1. Արարատը ներկայացվում է որպես սուրբ լեռ (որտեղ ներառվում է համաշխարհային ջրհեղեղից Նոյի փրկվելու մասին աստվածաշնչան պյուծեն, Հայաստանի՝ ընտրյալ երկիր լինելու համատեքստի խաղարկումը); 2. Արարատը որպես պատմական (հիմնականում Արևմտյան Հայաստանի) խորհրդանիշ, որը մասամբ արտահայտում է նաև հայերի ցեղասպանության, դրա հետևանքի՝ կորուսյալ հայրենիքի և հայկական տիյուրքի սիմվոլիկաները; 3. Արարատը որպես միավորող, համահայկական ազգային ինքնազիտակցության խորհրդանիշ, լոկալ ինքնության, նաև հայրենիք-Հայաստանի, կարոտի խորհրդանիշ; 4. Արարատը որպես բնաւեսք (լանդշաֆտ):

Արարատ լեռան թեմատիկան միաժամանակ որպես առանձին ընդգծված թեմաներ իր հետ բերում է աստվածաշնչան ջրհեղեղի, Նոյան տապանի և հայկական մշակույթում քրիստոնեության տարածման թեմաները: Քրիստոնեության խորհրդանշական սլիքը Հայաստանում ներկայացվում է Խոր Վիրապ Եկեղեցու միջոցով: Վերնիսաժան վարպետները և նկարիչները Խոր Վիրապն ընկալում և մեկնաբանում են որպես տեղական («մեր հայկական») քրիստոնեության խորհրդանշան և այդ կտրվածքով են մտցնում հուշանվերային շուկա: Եթե Խոր Վիրապը պատկերվում է Արարատ լեռան հետ (այս դեպքում դա իրական բնաւեսքային, այլ ոչ թե երևակայված հորինվածք է), ստացվում է ինքնության երկու մոդելների համատերում՝ Արարատը որպես ազգային, պատմական Հայաստանի/հայրենիքի և Եթնիկ տարածքի ինքնության դրսնորում, իսկ Խոր Վիրապի եկեղեցին՝ որպես հայկական քրիստոնեական ինքնության խորհրդանշան: Արարատ-Խոր Վիրապ թեմայի հայտնվելը հասկանալի է դառնում հենց վերնիսաժ-հուշարձան-գրուաշրջիկ համատեքստում: Տարածմանակ կատարված դիտարկումների համեմատությունից նկատելի է, որ այս թեմատիկան ուղղակիորեն առնչվում է Հայաստանում տուրիստական մշակությի ակտիվացման հետ: Տուրիստական զործակալությունների առաջարկած հայաստանյան ջրագայության փաքերների 99%-ում նշված է այցելություն դեպի Խոր Վիրապ: Բնականաբար, Արարատ լեռանը

հաջորդիվ սկսում է հանդիպել Նոյի և Նոյան տապանի թեմատիկայով հուշանվերներ, ընդ որում, զիսակութապես հայ մշակութային համատեքստում և որպես հայկականության խորհրդանիշ:

Այսպիսով, ազգային մշակույթը ներկայացնելու համար վերնիսաժան վարպետը ակամա դիմում է Եթնիկ տարածքի և կրոնի խորհրդանշանների կիրառմանը՝ մասնավորապես Արարատ լեռան և նոր Վիրապ Եկեղեցու օրինակներով, որոնք հետո սկսում են վերափոխվել զուտ ապրանքայինացված հուշանվերների:

